

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության  
և Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության  
միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը  
և Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը,  
այսուհետ՝ Կողմեր,

հենվելով հանցավորության դեմ պայքարի ոլորտում Անկախ  
պետությունների ներքին գործերի նախարարությունների  
համագործակցության մասին 1992 թվականի ապրիլի 24-ի Համաձայնագրի  
վրա,

կարևոր նշանակություն տալով հանցավորության դեմ պայքարի  
ոլորտում համագործակցության զարգացմանն ու երկու պետությունների  
քաղաքացիների իրավունքների և ազատությունների հուսալի  
պաշտպանության ապահովմանը,

ընդգծելով, որ հանցավորության դեմ պայքարի ոլորտում  
համագործակցության հիմքում ընկած են Կողմերի  
իրավահավասարության, փոխըմբռնման և փոխշահավետության  
սկզբունքները,

ելնելով Հայաստանի Հանրապետության և Բելառուսի  
Հանրապետության ներքին գործերի մարմինների միջև  
համագործակցության ամրապնդման և զարգացման փոխադարձ  
ցանկությունից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը, ազգային օրենսդրության համաձայն, իրենց  
իրավասության շրջանակներում ապահովում են մյուս Կողմի  
քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքների,  
ազատությունների, օրինական շահերի և սեփականության  
պաշտպանությունը:

Կողմերը պարտավորվում են ապահովել մյուս Կողմի պետության  
քաղաքացիների և իրավաբանական անձանց բողոքների և դիմումների  
անարգել ընդունումն ու քննումը ներքին գործերի մարմինների կողմից՝ այն  
հարցերով, որոնք վերաբերում են այդ մարմինների իրավասությանը:

## Հոդված 2

Կողմերը, իրենց պետություններում գործող օրենսդրության հիման վրա, համագործակցությունն իրականացնում են իրենց իրավասության սահմաններում, հետևյալ ուղղություններով՝

ա) անձի կյանքի, առողջության, ազատության, արժանապատվության և սեփականության նկատմամբ հանցագործությունների դեմ պայքարի,

բ) զենքի ու զինամթերքի, պայթուցիկ, թունավոր ու ռադիոակտիվ նյութերի հետ կապված անօրինական գործառնությունների դեմ պայքարի,

գ) թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի,

դ) կեղծ փաստաթղթերի, դրամանիշների և արժեթղթերի պատրաստման ու իրացման դեմ պայքարի,

ե) տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի,

զ) մաքսանենգության, ինչպես նաև այն հանցագործությունների դեմ պայքարի, որոնց օբյեկտները մշակութային և պատմական արժեքներ են հանդիսանում,

է) հանցագործների, քննությունից և դատից, պատիժը կրելուց թաքնվողների, անհայտ կորած, ինչպես նաև ալիմենտ վճարելուց և, ըստ հայցերի, դատարանների որոշումները կատարելուց խուսափող անձանց հետախուզման,

ը) Կողմերից մեկի պետության տարածքում հափշտակված առարկաների, այդ թվում՝ ավտոտրանսպորտի հետախուզման,

թ) չճանաչված դիակների, անհայտ հիվանդների և երեխաների ինքնության պարզման,

ժ) ավտոմոբիլային, երկաթուղային, օդային և խողովակաշարային տրանսպորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի,

ժա) տարերային աղետների, աղետների, խոշոր վթարների և հրդեհների հետևանքների վերացմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացման ժամանակ օգնություն ցուցաբերելու,

ժբ) ճանապարհային երթևեկության անվտանգության և հակահրդեհային անվտանգության ապահովման,

ժգ) օդանավերի թռիչքների, դրանց անձնակազմերի և ուղևորների անվտանգության ապահովման,

ժդ) Կողմերից մեկի տարածքով անցնող տարանցիկ և փոխանակության բեռների, ինչպես նաև Կողմերից մեկի՝ մյուս Կողմի տարածքում պահեստավորված բեռների պահպանվածության ապահովման:

Կողմերը նաև համագործակցում են փոխադարձ հետաքրքրություններ կայացնող այլ ուղղություններով:

### Հոդված 3

Կողմերի համագործակցությունն իրականացվում է հետևյալ ձևերով՝

ա) քրեական գործերով, օպերատիվ-հաշվառման գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերով հարցումների, հանձնարարությունների և խնդրանքների կատարմամբ,

բ) նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների վերաբերյալ օպերատիվ-հետախուզական, օպերատիվ-տեղեկատու և քրեագիտական, ինչպես նաև արխիվային տեղեկության փոխանակմամբ,

գ) օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումների անցկացմանն աջակցելով,

դ) ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող օրենսդրական և նորմատիվ ակտերի, ուսումնական գրականության և աշխատանքային փորձի փոխանակմամբ, ինչպես նաև կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործում փոխադարձաբար աջակցություն ցույց տալով,

ե) ավտոմոբիլային, քրեագիտական և հատուկ տեխնիկայի, կապի միջոցների, գույքի և արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի փոխշահավետ մատակարարմամբ,

զ) հատուկ և այլ բեռների տարանցիկ փոխադրումների իրականացմանը, դատապարտյալների տեղափոխմանը և ուղեկցմանն աջակցելով,

է) ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող գիտատեխնիկական տեղեկության փոխանակմամբ, փոխադարձ հետաքրքրություններ կայացնող արդիական հիմնախնդիրների վերաբերյալ գիտական հետազոտությունների, մշակումների և ծրագրերի համատեղ անցկացմամբ,

ը) ծածկագրային կապի կազմակերպմամբ,

թ) մշակութային և մարզական կապերի զարգացմամբ, աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների բուժմանը և սանատորաառողջարանային վերականգնմանն աջակցություն ցույց տալով:

Սույն Հանաձայնագիրը Կողմերին չի արգելում մշակել և զարգացնել համագործակցության այլ փոխընդունելի ձևեր, որոնք նշված չեն Հանաձայնագրում:

### Հոդված 4

Սույն Համաձայնագրի կատարման նպատակով Կողմերի կառուցվածքային ստորաբաժանումները, այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանումներ, իրենց իրավասության սահմաններում և նախարարությունների ղեկավարների թույլտվությամբ կարող են հաստատել անմիջական կապեր իրենց գործունեության առանձին ուղղություններով:

## Հոդված 5

Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված հարցումները, հանձնարարությունները և խնդրանքները պետք է պատշաճ կերպով ձևակերպված լինեն և ունեն հետևյալ ռեկվիզիտները՝

ա) հարցումը, հանձնարարությունը կամ խնդրանքը ուղարկող ներքին գործերի մարմնի և այն ներքին գործերի մարմնի անվանումները, ում դրանք ուղղված են,

բ) հարցմանը, հանձնարարությանը կամ խնդրանքին վերաբերող գործի կամ նյութի անվանումը,

գ) վկաների, տուժածների, կասկածյալների, ամբաստանյալների կամ դատապարտյալների ազգանունները, անունները և հայրանունները, նրանց քաղաքացիությունը, զբաղմունքը, մշտական բնակության վայրը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց օրինական ներկայացուցիչների ազգանունները, անունները, հայրանունները և հասցեները,

դ) հարցման, հանձնարարության կամ խնդրանքի բովանդակությունը, ինչպես նաև դրանց էությանը և իրավախախտման հանցակազմի նկարագրությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ:

Հարցմանը, հանձնարարությանը կամ խնդրանքին կցվում են նաև պատշաճ կերպով ձևակերպված հատուկ որոշումները, որոնք անհրաժեշտ են թույլատրված գործողությունները կատարելու համար:

Հարցնող Կողմի պետական լեզվով կազմված հարցումներին, հանձնարարություններին կամ խնդրանքներին կից փաստաթղթերին կցվում են նաև պատշաճ կերպով հաստատված դրանց թարգմանությունները՝ կատարող Կողմի լեզվով կամ ռուսերենով:

Հարցումները, հանձնարարությունները կամ խնդրանքները պետք է հաստատված լինեն ներքին գործերի մարմնի կամ ներքին գործերի նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

Հարցումները, հանձնարարությունները կամ խնդրանքները կատարելիս Կողմերը օգտվում են ռուսերենից:

Անհետաձգելի դեպքերում կարող են արվել բանավոր հարցումներ, սակայն դրանք անհապաղ պետք է հաստատվեն գրավոր, այդ թվում՝ տեքստի հաղորդման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

#### Հոդված 6

Հարցումների, հանձնարարությունների կամ խնդրանքների բավարարումը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն մերժվել, եթե հարցվող Կողմը գտնի, որ դրա կատարումը կխախտի մարդու իրավունքները, իր պետության անվտանգությունը և այլ կարևոր շահերը: Նման որոշում կայացնելու դեպքում հարցում անող Կողմը տեղեկացվում է գրավոր՝ մերժման պատճառների նշումով:

#### Հոդված 7

Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է մյուս Կողմին հաղորդվող տեղեկությունների գաղտնիությունը, եթե այդ տեղեկությունները կրում են փակ բնույթ, կամ եթե հաղորդող Կողմը դրանց բովանդակության հրապարակումը համարում է անցանկալի: Տեղեկությունների փակ լինելու աստիճանը որոշում է հաղորդող Կողմը:

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերից որևէ մեկի ստացած տվյալները և տեղեկությունները երրորդ Կողմին փոխանցելու անհրաժեշտության դեպքում պահանջվում է այդ տվյալները և տեղեկությունները տրամադրող Կողմի համաձայնությունը:

#### Հոդված 8

Կողմերը, փոխադարձ պայմանավորվածությամբ, իրենց աշխատակիցներին կարող են գործուղել մյուս Կողմի ներքին գործերի մարմիններ:

Ծառայողական գործուղման մեջ գտնվող աշխատակիցներին նրանց վրա դրված խնդիրները կատարելու համար ցույց է տրվում անհրաժեշտ օգնություն, տրամադրվում են տեխնիկական անհրաժեշտ միջոցներ, ավտոտրանսպորտ, կապի ուղիներ՝ տեղեկություն հաղորդելու համար, այդ թվում՝ փակ բնույթի: Անհրաժեշտության դեպքում աջակցում է գործուղման ընթացքում նրան բնակարան տրամադրելու, անցաթղթեր ձեռք բերելու հարցում: Գործուղված աշխատակիցների խնդրանքով՝ կարող է ցուցաբերվել նյութական օգնություն՝ հետագայում ծախսերը հատուցելու պայմանով:

Ծառայողական գործուղման մեջ գտնվող աշխատակիցներին, նրանց պարտականությունները կատարելու ընթացքում ապահովվում է

իրավական պաշտպանություն՝ ընդունող Կողմի պետության օրենսդրությանը համապատասխան:

#### Հոդված 9

Կողմերը, ներքին գործերի մարմիններում ծառայության ընդունելով մյուս Կողմի նախկին աշխատակիցներին, այդ մարմիններում ծառայություն անցնելու մասին իրենց պետության օրենսդրությանը համաձայն՝ լուծում են հատուկ կոչումներ շնորհելու համար նրանց ծառայողական ստաժի պահպանման, ծառայած տարիների համար տոկոսային հավելավճարի վճարման, աշխատանքի վարձատրման, կենսաթոշակի ապահովման և նրանց իրավունքներ ու արտոնություններ տալու հարցերը:

#### Հոդված 10

Համագործակցություն իրականացնելիս Կողմերն օգտվում են հայերենից, բելառուսերենից կամ ռուսերենից:

#### Հոդված 11

Կողմերի լիազորված ներկայացուցիչները հանդիպում են միմյանց՝ սույն Համաձայնագրի դրույթների իրականացման հետ կապված հարցերի համաձայնեցման համար:

#### Հոդված 12

Երկու Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ:

#### Հոդված 13

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ միջազգային այլ պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:

#### Հոդված 14

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի գործողության ընթացքում առաջացող ծախսերը, եթե այլ կարգ չի սահմանում:

#### Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կգործի մինչև վեց ամիս լրանալը՝ սկսած այն օրից, երբ Կողմերից մեկը կստանա դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մյուս Կողմի գրավոր ծանուցումը:

Կատարված է Ազգաբառ քաղաքում 1994 թվականի փետրվարի 17-ին, երեք օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, որոնք ունեն միանման ուժ:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի փետրվարի 17-ից: